

տանէ՛, դառնայ յետս եւ դնէ գոսպաթն այնմ տեղով ուր գնեց. եւ կենայ սակաւ մի, մինչեւ ցրվին շունք. ապա վայ տոնու եւ տանի առ տէրն: Եւ թէ թռչունք սպանանեն ի վերայ ²²⁰ ջրոց, զբիւնն գնոսա. նոքա երթեալ չրջին որոնեն եւ գտեալ բերեն տան ի տէրսն: Այլ եւ կաքաւս եւ զայլ որսս նոքա գտանեն եւ ցուցանեն տիրոջս իւրեանց: Իսկ կոյրքն եւ լուսաւորքն փոխանակ մարդոյ փոքրիկ շնակ ²²⁵ սունէին. զոր ի վիզն սարան անցուցեալ, միւս ձոթն սարանին ի գօտին կապեալ կամ ի ձեռին ունէր. եւ շունն զամէն փողոցնին շուռ ածէր կարգաւ. եւ խանութիւնն ու տներն բոլոր չրջէր եւ այնչափ աղիողորմ ձայն ածէր ²³⁰ եւ փաղաքէր փարեւով, մինչեւ տային ողորմութիւն. եւ երբ տեսանէր տալն, ապա այլ տեղ տանէր զկոյրն, որպէս կենդանի մարդն. եւ թէ կարիս ուղէր, զիտէր գտեղին շնակն եւ տանէր արտաքնոցն. եւ զամենայն կամս նորա ²³⁵ կատարէր զինչ եւ ասէր: Եւ վաճառականքն ածէին ընդ ինքեանս լակոսս փոխանակ նօքարի եւ ծառայի. եւ թէ տեղ երթային կամ շուկան, նոցա պատվիրէին թէ լաւ պահէ զօտան, զխանութն կամ զկուժաշն. եւ նա ²⁴⁰ նստեալ որպէս բանաւոր պահէր խիտ եւ ոչ շարժէր բնաւ ի տեղովէն, մինչեւ տէրն իւր գայր. եւ թէ ոք մերձենայր կամ գողանալ կամէր, հաջէր եւ վաղէր ի վերայ նորա:

Այլ եւ տեսաք անդ ջորիս մեծամեծս, որ ²⁴⁵